Հայտարարություն: Փոփոխություն «ԱԲ սերունդ» դպրոցական ծրագիրը փորձարկող ուսումնական հաստատությունների ցանկում

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST), հիմք ընդունելով ՄԱՍԷ Էօրնեկեան հանրակրթական դպրոցի որոշումը, տեղեկացնում է, որ դպրոցը դադարեցնում է հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացվող «ԱԲ սերունդ» փորձարարական ծրագրին իր մասնակցությունը:

Որոշումը կայացվել է դպրոցի Հիմնադրամի և հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ելնելով այլ կրթական ծրագրում դպրոցի ընդգրկումից:

Հիշեցնենք, որ 2023 թ. հունիսին FAST-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ հայտատարել էր բաց մրցույթ հանրակրթական ուսումնական հաստատությունների համար՝ միանալու և փորձարկելու «ԱԲ սերունդ» դպրոցական փորձարարական ծրագիրը:

Դպրոցների հետաքրքրվածությամբ և դիմորդների մեծ թվով պայմանավորված՝ ի սկզբանե նախատեսված 10 դպրոցի փոխարեն, ծրագիրը մեկնարկել էր ՀՀ 6 մարզում և Երևանում գտնվող 16 ավագ դպրոցներում, ներառյալ՝ ՄԱՍԷ Էօրնեկեան հանրակրթական դպրոցում: 2023 թվականի սեպտեմբերից ծրագիրը փորձարկող ուսումնական հաստատությունների ցանկը հաստատվել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարի 28 հուլիսի 2023 թվականի N 1253- Ա/2 հրամանով:

Փոփոխությունն արտացոլված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության մարտի 1-ի N 287-Ա/2 հրամանում:

Change in the list of educational institutions piloting the Generation AI high school program

The Foundation for Armenian Science and Technology (FAST), based on the decision of the Eurnekian School, informs that the school is ceasing its participation in the Generation AI pilot program implemented by the foundation.

The decision was made by the school foundation and its Board of Trustees due to the school's inclusion in another educational program.

In June 2023, FAST jointly with the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia announced an open tender for public educational institutions to join and pilot the Generation AI high school program.

Due to the interest of the schools and the large number of applicants, instead of the originally planned 10 schools, the program was launched in 16 high schools in 6 regions of the Republic of Armenia and in Yerevan, including the Eurnekian School. The list of educational institutions piloting the program from September 2023 was approved by the order N 1253-A/2 of the Minister of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia dated July 28, 2023.

The change is reflected in the order N 287-A/2 of March 1, 2024 of the Ministry of Education, Science, Culture and Sports of RA.

+374 60 74 00 44
education@fast.foundation
www.fast.foundation